

ՔՈՒՉԱԿԵԱՆ ՏԱՂԵՐ

(Շար․)

Ես մեննիմ ի քոյ վերայ՝ դու ըզքոյ ծամրդ թէ կտրես,
կրտրես մաշալայ վառես, ձեռքդ առնուս ու զիս բրնարես.
Գաս իմ հողվերօքս անցնիս, հետ լընուս զաշերտ ու թափես,
Գըրկիկ իմ քարիս ամես, զապառաժ վէճըս համբուրես :

×

Իմ եարն ի հարանց տանէն հանց ելաւ զինչ նաւն ի ծովէն.
Հազեր ըզկանանչ ճուպան ու քաշեր զզլխարկն ի վերէն.
Իր շունչն է ի յայն մըշկէն, որ դըրած ի յամպարիէն.
Երեսն յայն զումաշն նըման, որ հանած Քըտանգաց միջէն :

×

Հընցեղ կունահ է 1) սըրտիս, որ հազնիմ ես այլ մաղեղէն,
Հազնիմ ի լեռներն ինկնիմ, լօք ուտեմ զամէն խոտեղէն.
Կասկած կայ ի յիմ սըրտիս, զարհուրիմ ի մահուանէն.
Վախեմ թէ անէրէց մեննիմ ու տանին թաղեն անօրէն :

×

Իու ե՛լ, արի՛ ձեր տանէն, զինչ ելնէ արեւն ի մօրէն.
Ծագէ լոյսն ի քո ծոցէն, զինչ զարնան կայծակն 2) ի յամպէն :
Շատ երէց, շատ հարեղայ իջուցեր քո սէրտ ի բեմէն.
Ձիս այլ սիրու տէր արիբ, հանեցիր իմ հօրն ի տանէն :

×

Փոքրիկ բոլորիկ դըռնակ, որ ի քէն ծագեց լուսնէակ.
Քո մէջքն է քան ընու բարակ ու ծամերտ իջեր բարունակ :
Ծօ լա՛ճ, երբ զայտ ինձ ասիր, նա ապրիս բազում ժամանակ.
Յօրէս, ի ժըմէս ի վեր, ի ծոցէս այնեմ քի ճարակ :
Ասիր ու չարիր ճարակ, թող ինկնիս ի հուր ՚ւ ի կրրակ :

×

Փոքրիկ բոլորիկ շամամ, յե՞րբ տի յի 3) սիրուտ տիրանամ.
Քո սէրտ յանատակ ծովին, ատ քաֆիր ալիտ պահապան :
Երթամ հաւ մրտեմ լինամ, զամ ինկնիմ ի ծովտ ու լողամ.
Հոնչաք ել ու մուտ անեմ, մինչեւ քո սիրուտ տիրանամ :

1) Ձեռ․՝ կուհանէ : 2) կայծակն : 3) Իմա՛ պիտի բլլի :



Երկու թուի ու մէկ բարակ կու կենան ի մէկ բըրբըշակ .
Թուիսն այլ ի բարակն ասաց , ի ծոցէս անեմ քի ճարակ :
Ասաց ու չարաւ ճարակ , թող ընկնի ի ծովն անատակ .
Ջրկունքն ի մըսէն ուտեն ու քաշեն ի վըտկէ վըտակ :



Լուսինն ի սարէն փըրթաւ , ինքն ու իւր աստղըն ի հիտրաց .
Աղւորն ի դիրկս առի , պազ առի երկուքն ի հիտրաց :
Ստեղծողն իր բերնովն ասաց . մի՛ թողուր զատ եարտ ի ձեռաց .
Հընցկուն պէլըման աղւոր չեմ ստեղծեր երկուքն ի հիտրաց :



Վաղվենէն ի դուրս ելայ , արեգակն աչացս ի դիմաց ,
Աղւորն ալ ի դէմս ելաւ , զէտ հազար լուսին բոլորած .
Ասի թէ սիրեմ ըզքեզ , լօք պըռկունքն ալ ի դէմս իխած .
Սիրես նա՛ սիրէ դու մէն , մի աներ այլ մարդու իմաց :



Հանեմ զքեզ ի քո գըլխուտ յարեւուտ ու յայլ շատ իրաց : (*)
Տարպայ մի սիրու վերայ , ծեծեցին կողերս երեւաց :
Դարձան ապուրչումէ թելով կապեցին , հետըն չերեւաց .
Առէք զիս յիմ եարն տարէք , թէ հազար կողերս է լոսած .
Ձերեսս երեսին զընեմ եւ երզնում թէ տեղ չցաւաց :



Դէմ առաւուտու լուսուն քուն անուշ գայ աղամորդոյն .
Բարակ սիրու տէր մարդիկ ինքն ու իր եարըն մէն ի քուն .
Ձերեսն երեսին զըրեր ու ձեռնին ի մէջ ծըծերուն .
Ամէն չըմտեմ մարդու պազ 1) կու տար իր շըրթներուն :



Պիտէր զիս ասուն խօսուն , պըլպուլին խելօքն ու գիտուն .
Որ գայն 2) կարնայի գիտնալ 3) թ՛աղւորին ծոցն ո՞վ կայ ի քուն .
Ով ի նորա ծոցն ի քուն , թող խօթէ սեւ օձն իր լեզուն .
Ո՛չ պազ 1) տայ , ո՛չ պազ 1) առնու , ո՛չ խաղայ հետ իւր ծըծերուն :



Երբ ես մեր քաղքէս ելայ , արեգակն էր երկու կանդուն .
Ելայ յայս քաղաքս եկայ , լօք եղաւ օրիկս իրիկուն :
Աղւորն այլ ի դէմս ելաւ , պինտ զըրկեց տարաւ զիս ի տուն .
Շամամ ծըծերուն միջին տեղ ձըզեց ՚ւ արաւ զիս ի քուն .
Պազ 1) տայր ու պազ 1) առնուր , զարվ անէր մէկալ գիշերուն :



Ի՞նչ եմ արեր քեզ հոգի , որ կ'ասես թէ սիրաբլս քար է .
Բաւել թէ կարծիք ունիս , աչերուս թ'այլ մարդ կու սիրէ .
Երզնում 4) զինչ երզում ունիս , որ Աստուած ի վեր վկայէ .
Սըրտիկս ի քենէ ի զատ չեմ մընար թ'այլ մարդ կու սիրէ :

Հրատարակեց՝ Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ

(Շարունակելի)

*) Այս տողը նախորդ տաղիկին վերջին տողն է : (Ա.Ձ.)
1) Ձեռագիր . Պար : 2) Ձան : 3) Գիտնար : 4) Երզնու :